ԱԲՐԱՀԱՄ ԶԱՄԻՆՅԱՆԻ ԱՐԽԻՎԸ

Ա. Հ. ԱԴԱՄՅԱՆ

Նշանավոր հայագետ Աբրահամ Հարությունի Զամինյանը ծնվել է 1861 թ., Նոր-Նախիջևանում, դերձակի ընտանիքում։ Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի քաղաքի թեմական դպրոցում, որն ավարտելով՝ ընդունվել է Գևորգյան ճեմարան, այնուհետև աշխատել է Նոր-Նախիջևանում՝ որպես թեմական դպրոցի հայոց լեզվի և գրականության դասատու և միևնույն ժամանակ զբաղվել է հայագիտությամբ։ 1908—1909 թթ. Նոր-Նախիջևանում հրատարակել է «Հայոց եկեղեցու պատմություն» վերնագրով երկհատոր արժեքավոր ուսումնասիրությունը, 1914 թ.՝ «Պատմություն հայ գրականության» ուսումնասիրությունը (Ա մաս), որն ընդգրկում է հայ գրականության պատմությունը սկզբից մինչև Երեմիա Չելեպի Քյոմյուրճյանը (XVII դ.)։

Ա. Զամինյանը ժամանակի հմուտ գրաբարագետներից էր, որին աշակերտեց Հ. Աճառյանը։ Ա. Զամինյանը մահացել է 1937 թ., Երևանում։

1955 թ. փետրվարի 28-ին Աբրահամ Զամինյանի որդին՝ Սիմեոն Զամինյանը, Մատենադարանին նվիրեց հոր արխիվը, ուր կան հայագիտական այս կամ այն խնդրին վերաբերող անտիպ ուսումնասիրություններ, վավերագրեր, իր և այլ հայագետների նամակներ ու այլ նյութեր։

Արժեքավոր է «Կորիւն Վարդապետ, Պատմութիւն վարուց և մահուան առն երանելւոյն Մաշտոց Վարդապետի» երկասիրության Ա. Զամինյանի կազմած բնագիրը՝ ուսումնասիրությամբ, համապատասխան ծանոթագրություններով հանդերձ։ Ա. Զամինյանը հանգամանորեն քննելով Կորյունի երկի լեզուն, նկատում է. «Ոսկեդարյան գրական լեզվի մեջ յուրահատուկ տեղ է գրավում Կորյունը, որի միակ ինքնուրույն գրական գործը, բառական ու կետադրության տեսակետով ճշտված, ահա հրապարակ է գալիս։ Յուր ընտիր քերականությամբ, բառերի կանոնավոր դասավորությամբ, նույնանիշների պեսպեսությամբ, բարդված արմատների գեղեցիկ կրկնությամբ և այլ հատկանիշներով Կորյունի լեզուն զուտ ոսկեդարյան դրոշմ է կրում...»[1]։

Հայագիտության մեջ տարբեր կարծիքներ կան պատմահայր Մովսես Խորենացու ապրած ժամանակի շուրջ։ Ուշագրավ է Ա. Զամինյանի «Մովսես Խորենացին և իր ժամանակը, ընկերակիցներն ու գործերը»[2] խորագրով անտիպ ուսումնասիրությունը, ուր հեղինակը բանավիճում է Խորենացուն VIII դ. հեղինակ համարող Ն. Ակինյանի դեմ։ Ա. Զամինյանը սկզբնաղբյուրների, ինչպես նաև հայագետ Ս. Մալխասյանի նորագույն հետազոտությունների վրա հենվելով ցույց է տալիս, որ Խորենացին V դ. հեղինակ է։

Ուշագրավ է Ա. Զամինյանի «Կրտսեր նախարարների ծագումը ըստ Մով-

---

1 Մատենադարան, Ա. Զամինյանի արխիվ, թղթ. № 232ա, վավ. № 100։

2 Նույն տեղում, վավ. № 110։

սեռ Խորենացւոյ»[3] ուսումնասիրությունը, մի խնդիր, որով հայագիտությունը մինչ այդ չէր զբաղվել։

Ինչպես հայտնի է, VII դ. պատմագիր Սեբեոսի «Պատմութիւն ի Հերակլն» գործի հրատարակիչ Պատկանյանը (1879 թ. Պետերբուրգ) այն կարծիքն է հայտնել, որ այդ գրքի Ա և Բ դպրությունները Սեբեոսինը չեն և հետագա ընդմիջարկություն են։ Հարցի շուրջ եղել են զանազան կարծիքներ։ Ա. Զամինյանը ևս զբաղվել է այդ հարցով և Սեբեոսի բնագիրը վերակազմելու փորձ կատարել[4]։

Արժեքավոր են Ա. Զամինյանի՝ «Միքայել Ղազարյան Նայրանգյանի կյանքը»[5], «Համառոտ համեմատական քերականություն»[6], «Կենսագրական հիշատակներ մերձավոր անցյալից»[7], «Հայոց եկեղեցու պատմության ընթացքը» և այլ անտիպ աշխատություններ, ինչպես նաև «Պատմություն հայոց գրականության» Ա մասի լրացված մեքենագիր օրինակը, որը հեղինակը դեռևս 1928 թ. պատրաստել է հրատարակության[9]։

Ա. Զամինյանի արխիվում են պահվում 1799—1906 թթ. ընթացքում (հայերեն և ռուսերեն) Նոր-Նախիջևանի հայերի Ղրիմից գաղթելու, Նոր-Նախիջևանը հիմնելու, բնակիչներին աջակցություն ցույց տալու առթիվ ռուսական ցարերին ուղղված գիմումներ, Նոր-Նախիջևանի և շրջակա գյուղերի բնակիչների տնտեսական, կուլտուրական, քաղաքական, վարչական, կենցաղային և այլ հարցերի վերաբերյալ գրություններ, Նոր-Նախիջևանի և նրա գյուղերի եկեղեցիների եկամուտների մուտքի և ելքի, առևտրական հաշիվների մատյաններ, Ներսես արքեպիսկոպոսի որոշ գրությունների կրկնօրինակներ, քաղաքագետ Հ. Խալիպյանի և Գ. Պատկանյանի դատական գործերի մասին գրություններ, Աստրախանի նավահանգստի, ադմիրալ Վիշկինի և Վաճառական Պոպովի առևտրական փոխգրություններ, Գևորգ Դ. Կաթողիկոսի մի կոնդակի պատճեն և այլն։

Ուշագրավ է Նոր-Նախիջևանի վաճառական Սարգիս Խոճայանցի 1880—1906 թթ. կազմած «Հիշատակարանը»[10], ուր նա խոսում է իր կյանքի ու գործունեության, 1896 թ. հայկական կոտորածների, ցարական կառավարության կողմից հայկական եկեղեցական կալվածքների բռնագրավման, դրպոցների փակման, Աստրախանի, Երևանի, Կարսի գրավման և այլ հարցերի մասին։

Ա. Զամինյանին հասցեագրված որոշ նամակների չգոյությունը ենթադրել է տալիս, որ հայագետի արխիվը լրիվ չէ։ Այդտեղ են Գ. Այվազյանի, Գ. Աղաֆերյանցի, Հ. Չերքեզյանի, Գ. Խաթրանովի և այլոց մի քանի նամակները՝ Հ. Խալիպովին և ուրիշներին ուղղված։ Զամինյանի արխիվում է

---

3 Նույն տեղում, վավ. № 109։

4 Նույն տեղում, վավ. № 101։

5 Նույն տեղում, վավ. № 112։

6 Նույն տեղում, վավ. № 113։

7 Նույն տեղում, թղթ. № 232բ, վավ. № 116։

8 Նույն տեղում, վավ. № 120։

9 Հիշյալ աշխատության ձեռագիրը պատրաստ լինելով հրատարակության, Սիմեոն Զամինյանը չհանձնեց Մատենադարանին, որի պատճառով այն մեքենագրվեց և պահվեց Մատենադարանում։

10 Մատենադարան, Ա. Զամինյանի արխիվ, թղթ. № 232ա, վավ. № 94։

գտնվում 1907 թ. հոկտեմբերի 8-ին Նոր-Նախիջևանից հայագետ Գարեգին Հովսեփյանին գրած բանասիրական հարցեր արծարծող իր իսկ նամակի սեվագրությունը»[11] գրված Գ. Հովսեփյանի «Խոսրովիկ թարգմանիչ, Ը դար» վերնագրով աշխատության առթիվ։ Գ. Հովսեփյանը նկատում է, որ Խոսրովիկը VIII դ. հեղինակ է։ Ա. Զամինյանը մի շարք փաստերով ապացուցում է, որ Խոսրովիկ թարգմանիչը VII դ. վերջին և VIII դ. առաջին կեսի հեղինակ է։ Նամակում նա գրում է. «Անցյալները տ. Երվանդ Վարդապետին[12] մի նամակ էի գրել յուր «Պարսից ժողովի» մասին։ Այժմ էլ սույն համառոտ տողերն եմ Ձեզ ուղղում Խոսրովիկ հռետորի մասին, որի գործերն եք հրատարակել։

Թե Դուք և թե այլք հաստատում եք, որ Խոսրովը Ը դարի անձնավորություն է, և այս ճշմարիտ է, քանի որ նա Մանազկերտի ժողովին մասնակցում է, բայց միթե արգե՞լք կա հաստատելու, որ նա ապրում էր 7-րդ դարի վերջին մասերում՝ Սահակի[13] ու Եղիայի[14] կաթողիկոսության օրերում և վախճանեցավ 8-րդ դարի առաջին կեսում։ Նրա գրվածքի ուսումնասիրությունը ինձ համոզեց, թե նա արդարև այս ժամանակաշրջանում ևս ապրում էր։ Նա գործ ունի Աթահաս Բ (684—686) պատրիարքի հետ, որ մի հմուտ անձ էր և Պորփյուրի[15] գործերի թարգմանիչ (645 թ.) և որը յուր պատրիարքության ժամանակ զբաղվեցավ ժամանակագրության խնդրով...»[16]։

Այսպիսով՝ վկայակոչվածով, հարկավ, չի ավարտվում Ա. Զամինյանի արխիվում պահվող նյութերի ցանկը։ Բայց բերվածն էլ հիմք է տալիս ասելու, որ հայագետի շատ հարցադրում-լուծումներ այսօր էլ զուրկ չեն գիտական հիմնավորվածությունից և որոշակի նպաստ կլինեն ժամանակակից հայագիտությանը, եթե, անշուշտ, կարող ձեռքով խմբագրվեն ու լույս աշխարհ հանվեն։

АРХИВ АБРААМА ЗАМИНЯНА

А. А. АДАМЯН

Резюме

В 1908—1909 гг. в Нахичеване-на-Дону Заминяном была издана двухтомная «История армянской церкви», а в 1914 г.— ценные арменоведческие исследования под заглавием «История армянской литературы».

В 1955 г. сын Абраама Заминяна, Симеон Заминян подарил Матенадарану архив своего отца, в котором находятся рукописи опубликованных и неопубликованных арменоведческих исследований, письма, написанные самим Заминяном и другими, а также иные документы.

---

11 Այդ նամակի բնօրինակը գտանք Գ. Հովսեփյանի արխիվում (թղթ. № 95, վավ. № 123), որից վկայակոչում ենք սույն հոդվածում։

12 Խոսքը Երվանդ Տեր-Մինասյանի մասին է։

13 Սահակ Գ. Զորափորեցի (աթոռակալել է 677—703 թթ.)։

14 Եղիա Արճիշեցի (աթոռակալել է 703—718 թթ.)։

15 Պորփյուր՝ III դ. հույն իդեալիստ փիլիսոփա։

16 Մատենադարան, Գ. Հովսեփյանի արխիվ, թղթ. № 95, վավ. 123։